



Գևորգ Էմին

Տխուր պատմություն

Նա ինձ այնպես խո՛ր ու խե՜նթ է սիրում,
Որ պատրաստ է-
Իմ մի՛ խոսքի սիրույն-
Չոհե՛լ իր կյա՛նքն ու տեն՛չե՛րն անհամար.

Իսկ ես, չոքա՜ծ քո ծնկների առաջ,
Իրա՜ն եմ խառնում արցունք ու հառաչ,
Քո, քեկուզ մի... կե՜ղծ ժպիտի համար...

Նրան, ում չէի սիրում

Ես քեզ երդում չե՛մ տալիս,- դու գիտե՛ս,
Քեզ չեմ կանչում ,- դու գիտես.

Մերն ըղձանքի՜ց է ծնվում, տեն՛չանքի՜ց,
Դու ի՛նքդ ես ինձ հյուր գալիս,- դու գիտես.

Չէ՞ որ նվերն, - ինչքա՜ն էլ թանկագին,-
Նվաճա՛ծն է ցանկալի,- դու գիտես:

Դու ինձ չէի՜ր ճանաչում,- ինչո՞ւ եկար,
Չէի՜ սիրում ու կանչում,- ինչո՞ւ եկար,

Ա՛յն, ինչ երդմա~մբ են տալիս ու լացով,
Ինձ... խլե~լ ես աղաչում,- ինչո՞ւ եկար...

....Հիմա անցնում ես՝ օտա~ր մի անցորդ
Եվ կրկին չե՛ս ճանաչում,- ինչո՞ւ եկար: